

ՆՈՐԱՅՐ Բ. ՊՈՂՈՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Դոցենտ, ԵՊՀ,
nornor@mail.ru

XVII–XVIII ԴԴ. ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XVII–XVIII դարերը նոր փուլ են հայոց լեզվի պատմության և մեր գրավոր մշակույթի համար: Այս շրջանում ստեղծվում են գրեթե բոլոր ժանրերի բազմաթիվ ինքնուրույն և թարգմանական ստեղծագործություններ, որոնք հարուստ նյութ են պարունակում ժամանակաշրջանի հայերեն գրավոր մշակույթի լեզվական ընդհանուր պատկերն ամբողջացնելու համար:

Այս շրջանը հայոց լեզվի շրջանաբաժանման հոլովությամբ համապատասխանում է **վաղ աշխարհաբարին**¹ միջին հայերենից նորմավորված նոր աշխարհաբարին անցնելու ենթաշրջանին: Այդ շրջանում իրար կողք-կողքի գոյակցում են գրաբարով, նոր ձևավորվող աշխարհաբարով ու ժամանակի բարբառներով գրված երկերը: XVII դարի վերջը – XVIII դ. սկիզբը շաղկապում են մի կողմից միջին հայերենը, մյուս կողմից՝ նոր-նոր ձևավորվող ու աստիճանաբար նորմավորվող գրական աշխարհաբարի տարածքային տարբերակները (Կ. Պոլսում, Վենետիկում և Զմյուռնիայում, Թիֆլիսում, պարսկահայ և հնդկահայ գաղթօջախներում և այլուր)²: «Ի տարբերություն նախորդ ենթաշրջանի (միջին հայերենի – Ն. Պ.)՝ այս ենթաշրջանում կան որոշակի միասնականացնող միտումներ, որոնք էլ հիմք են տալիս ընդհանուր լեզվի կազմավորման և նրա կողմից գրաբարի՝ որպես գրական լեզվի, ֆունկցիաները սահմանափակելու համար»²:

Հայերենի զարգացման շղթայում միջանկյալ և այս փուլում անցումային դիրք գրավող աշխարհաբարում առկա են բնագրերի երեք կարգի տարատեսակներ՝ հին գրական հայերեն կամ գրաբար, գրաբար-աշխարհաբար միախառն բնութագրեր (քաղաքացիական հայերեն), բարբառներ: Ըստ այդմ՝ իրենց լեզվական որակով դրանք կարելի է բաժանել մի քանի հիմնա-

1 Վաղ աշխարհաբարին և նրա դրսևորումներին նվիրված են մի շարք ուսումնասիրություններ, տես օրինակ՝ Գ. Զահուկյան, Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը XVIII–XIX դդ., 1954 (անտիպ): Գալստյան Ս., 1963: Շահբազյան Գ. Տ., 1963: Իշխանյան Ռ., 1979: Մկրտչյան Է., 1979, թ. 3:

2 Զահուկյան Գ., 1969, 50:

կան խմբերի³:

1. Գրաբար բնագրեր: Ուշ միջնադարում գրաբարը պահպանում է եկեղեցու և գիտության լեզու լինելու իր գործառնությունը, և շարունակում են ստեղծվել գրաբարով բազմաթիվ երկեր: Այս շրջանի գրաբարը որոշակիորեն տարբերվում է դասական շրջանից, այն մեծամասամբ չունի դասական հայերենի հատկանիշները հատկապես հետևյալ առանցքային կետերում. հին շրջանի համեմատ տեղի են ունեցել իմաստային տեղաշարժեր՝ պայմանավորված խոսակցական լեզվի ազդեցությամբ⁴, ձևաբանության մեջ նկատվում է հոլովական և խոնարհման նախկին շեղումների կայունացում, շարահյուսության մեջ ի հայտ են գալիս համաձայնության և շարադասության՝ նոր մտածողությանը հարիր կաղապարներ, բավականին շատ են նորակազմությունները: Նշված նոր իրողությունները պայմանավորում են XVII–XVIII դդ. գրաբարի նոր որակը, որը որոշակիորեն տարբերվում է թե՛ դասական շրջանի գրաբարից, թե՛ իր ժամանակի խոսակցական լեզվից:

Հիմնականում գրաբարով են գրված դիվանական փաստաթղթերը («Մայր դիւան Մխիթարեանց Վենետոյ ի Ս. Ղազար», «Դիւան Սուրբ Յակոբայ»), պատմագրական երկերը (Ա. Դարիժեցի, Ստ. Ռօշթա և այլն), նամակներն ու պաշտոնական գրությունները, կոնդակները: Ներկայացնենք մեկ-երկու նմուշ նման գրվածքներից. «Բազում անուղղայ և անպատշաճ անկարգութեամբ ելից զտունս Հայոց, զոր աստանօր կամիմ ի գլուխս բաժանելով բացայայտել սակաւօք» (Դիւան Ս. Յակոբայ), «Յաւուրս սորա դարձեալ ելին բազում պարոնայք և ռամիկք ի թափումն սուրբ աշխարհին, բայց ազգնյունաց դաւով բազում չարիս անցուցին ընդ նոսա ի ճանապարհին» (Մինաս Համդեցի, Ազգաբանութիւն հայոց) և այլն:

Նոր որակի գրաբար է լատինաբան հայերենը: Այն դրսևորվում է դասական գրաբարից տարբերվող հնչյունական, ձևաբանական, հատկապես՝ բառապաշարային նոր իրողություններով, որոնց հանրագումարը հանգեցնում է հայերենի մի նոր «տարատեսակի»: «Լատինաբան հատկանիշներն ըստ էության այլ բան չեն, քան հեռացում «հայկաբան» հայերենից և մոտեցում լատիներենին»⁵: Անառարկելի է այդ որակի լեզվով ստեղծված գիտական, քերականական, աստվածաբանական, բառարանագրական, պատմագրական ու այլ երկերի սովոր ծավալը և դրանց բերած մեծ նպաստը հայերենի պատմությանը:

2. Գրաբար-աշխարհաբար միախառն բնագրեր (քաղաքացիական հայերեն): Այս խմբում տարբերակվում են երկու ենթախմբեր: ա) Աշխարհաբար տարրերով հարուստ («ռամկախառն») գրաբար, ուր քերականական հիմքը գրաբարն է, օրինակ՝ Յովհաննէս Կամենացի «Պատմութիւն պատերազմին Խոթինու», Սիմեոն Լեհացի «Ուղեգրութիւն», Զաքարեայ Մարկաւազ «Պատմագրութիւն», Յակոբ Կարնեցի «Տեղագիր Վերին Հայոց», Բունիաթ Սեբաստացի «Բժշկարան» և այլն: բ) Գրաբարախառն աշխարհաբար, ուր

3 Այս շրջանի հայերեն գրավոր աղբյուրների համառոտ բնութագրման առիթ ունեցել ենք, տես **Պողոսյան Ն.**, 2013, 147–149:

4 Իմաստավորության նոր դրսևորումների մասին տես **Պողոսյան Ն.**, 2012, թ. 2, 227–239:

5 **Համբարձումյան Վ.**, 2010, 144:

հենքը չնորմավորված աշխարհաբարն է, բայց հեղինակներն գործածում են նաև գրաբարյան ձևեր, ինչպես՝ Յովհաննէս Թութունջի «Ուղեգրություն», Օգոստինոս Բաջենց «Ժամանակագրություն», Ավետիք Տիգրանակերտցի «Տէֆթէր գիրք» և այլն:

Լինելով միջին հայերենից աշխարհաբարի անցման փուլում ստեղծված երկեր՝ XVII–XVIII դդ. հայերեն բնագրերն աչքի են ընկնում հատկապես վաղաշխարհաբարյան ձևերի բազմազանությամբ: Հաճախ միևնույն երկում, անգամ միևնույն էջին կամ նախադասության մեջ կարելի է հանդիպել գրաբարը, միջին հայերենը և այս կամ այն բարբառը ներկայացնող լեզվական իրողություններ: Օրինակ Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի 1670 թ. կտակից. «Որքան վերայ հայիմք, տարի քան գտարի ըստ հաճոյիցն Աստուծոյ գործ նուագում է»:

Հակոբ Կարնեցու «Ժամանակագրության» մեջ հետևյալ հատվածը նոր գրական լեզվի սաղմնավորման նմուշ կարելի է համարել. «Ի թվակա-նութեանս մերում ՌԾԵ (1606) սով սաստիկ է եղեալ, որ մարդ գմարդ, շուն և կատու կերեալ են»: Հետագա էջերին հեղինակը նույնպես միախառն գործածում է լեզվական նոր ձևեր, ինչպես՝ «Տէր Գէորգն և Տէր Անանիան քահանայ են եղեալ: ...Զմիմեանց երկիրն ասպատակեն և թալանեն և գողանան եղեր հանապազ»:

Հիմնականում գրաբար-աշխարհաբար միախառն հատկանիշներ են կրում նաև հիշատակարաններն ու հիշատակագրությունները, օրինակ XVII դդ.՝ «Յիշեսցիք գտէր Սարգիս Հիզանցին, զվարպետաց վարպետն, որ շատ աշխատանք քաշեր է հետ իմ հօրն ի կարդացնելն, ի գիր և ի ծաղիկ ուսուցանելն», «Ամառնային ժամն չէաք կարել նստիլ, թէ զթանաքն եփէի նայ՝ գրիչ չէի գտնուլ, և թէ գրիչն գտնէի՝ նստոյ տեղ չկայր»:

XVII դ. հետևյալ հիշատակագրությունը շատ բանով հիշեցնում է ավելի ուշ շրջանի գրական լեզուն. «Սուրբ Էջմիածնայ գիւղի անունն Վարդգէս է, Վաղարշ Արշակունին մեծացրել է և իւր անունն դրել: ՌՃՁ մարտի Ը, Մաղաքիա վարդապետ աթոռակալ»⁶: Այս նմուշներով հաստատվում է, որ Արարատյան բարբառի հիմքի վրա XIX դ. կեսերից նորմավորվող գրական արևելահայերենի նախնական տարբերակն իրականում գործածվել ու գրվել է շատ ավելի վաղ:

Ներկայացրած գրաբար-աշխարհաբար միախառն բնագրերը լեզվական առումով տարբեր բնութագիր են ստացել տարբեր լեզվաբանների կողմից: Դեռևս XVIII դ. Պաղտասար Դպիրը այն համարում է «**քաղաքացիական հայերեն**, որ չէ ամենևին կանոնաւոր և ամենևին անկանոն, այլ խառն յերկոցունց՝ ի կանոնաւորէ և յանկանոնէ, և զայս ի գործ ածեն քաղաքական մարդիկ (քաղաքաբնակ – Ն. Պ.) և սակաւ ինչ տեղեակք գրոց: Նաև քերթողք ի յատենախօսութեան և ի զրուցատրութեան զքաղաքականն ածան ի գործ, զի դիւրաւ իմասցին լսողքն և զի այնպէս վայել է խօսակցության»⁷:

Սրա մեկ այլ դրսևորումն է «**միջբարբառային խոսակցական հայերենը**» կամ միասնական նորացող գրական հայերենը, որով միմյանց հետ

6 Տե՛ս Պողոսյան Ն., 2012:

7 Պաղտասար Դպիր, 1736, 468:

հաղորդակցվել են տարբեր բարբառակիր հայերը:

Միասնական նորացող գրական հայերեն, «միասնական այն իմաստով, որ չունի արևմտահայերեն-արևելահայերեն բաժանումը, միավորում է նրանց առանձնահատուկ տարրերը»⁸: Ռ. Իշխանյանի բնութագրելով՝ «միասնական նոր գրական հայերենի» մեջ համատեղվում են արևելյան և արևմտյան բարբառները տարբերող տարրերը:

Գուսանական հայերեն, որով ստեղծագործում էին և իրենց երգերն ու բանաստեղծություններն էին գրում տարբեր վայրերից ու գավառներից սերող հայ գուսաններն ու աշուղները:

Նշված բոլոր բնութագրերը մեկ հիմնական կետում համընկնում են. լեզվական նոր որակը հասկանալի էր իր ժամանակի հայության բոլոր հատվածներին:

3. Բարբառային բնագրեր: Դրանք որոշ առումով կարելի է դիտարկել որպես այս կամ այն բարբառի արտահայտություններ, ինչպես՝ Զաքարիա Ազուլեցու «Օրագրութիւն», Զուար Ճիլերճի Օղլի քահանայի «Ճանապարհագրութիւն և ուխտ յերուսաղէմ», Եղիա Կարնեցու գրվածքներն ու նամականին, ռուսական արքունիքին ուղղված արցախահայերի նամակները (հրատ. Կ. Եգյան), Տրանսիլվանիայի հայերի գրագրությունները (հրատ. Գովրիկյան) և այլն:

Թվարկված բնագրերի դեպքում խոսքը ոչ թե բարբառային տարրեր պարունակող, այլ այնպիսի տեքստերի մասին է, որոնք գրվել են ուղղակի իր ժամանակի բարբառով և հնարավոր է տեղայնացնել՝ մատնացույց անելով կոնկրետ բարբառի հնչյունական, ձևաբանական կամ այլ հատկանիշի առկայությունը: Այդ իմաստով ևս XVII-XVIII դդ. հատկանշական են, քանի որ գուտ բարբառային առաջին տեքստերը պահպանվել և մեզ են հասել այս շրջանից, դրանից առաջ բարբառային տեքստ այսօրվա պատկերացմամբ չենք հանդիպում:

Այդպիսի նմուշներից է Զուար քահանայի ուղեգրությունից. «Կայ մէջ տեղն փոքր պօլմէ դուռ մի, և ունի մահտուսէն ղափուճի, որ նորա մանսուպ է, և կայ օտայ մի միշտ միսաֆիրն անդ նստին: Կայ աջ կողմն փոքր պարմախլըխ մի, որ լաթ վլանալու ղազաններն անդ է, ով ուզէ՝ կ'առնէ կ'երթայ պաղչան լաթերն կու լուան»: Եղիա Կարնեցու նամակներից. «Մին էլ թէ ալիշվէրիշի էհուալն հարցանես, մինչի էս թարեղս Գանձա զարպաֆին լիտրն տասներկու հազար դիան է, հիմա յիչաւ մին թուման, ամմա շամախու համիշա խապար գու գա, թէ տասնեօթ հազար է»:

Բարբառային այս բնագրերը հսկայական նյութ են մատուցում հայերենի պատմական բարբառագիտությանը:

Մեկ ընդհանուր ժողովրդախոսակցական հայերեն չլինելու պայմաններում նոր գրական հայերենն այս շրջանում հանդես է գալիս լեզվական տարբերակներով: Նախնական դիտարկումն իսկ ցույց է տալիս, որ ուրվագծվում էին միջին հայերենին հաջորդող նոր հայերենի նորմավորման սաղմերը, ընդ որում՝ **տարբեր կենտրոններում**, որ մի քանիսն էին: Նախ՝ տնտեսական ու մշակութային ակտիվության տեսակետից առանձնանում էր

8 Իշխանյան Ռ., 1978, 20:

Ջուղան, ապա և՛ Նոր Ջուղան: Այստեղի հայերը սերում էին զանազան գավառներից, քաղաքներից, և ուրեմն այդքան խոսածք ու բարբառ էլ խաչվում էին իրար. «Էին սոքա յագգէն հայոց ժողովածու ժողովուրդք, որք յիւրաքանչիւր աշխարհաց վտարանդի եղեալ էին և եկեալք յԱտրպատականի աշխարհի բնակեալք. որք էին ի յԱմթայ, ի Գազկու, ի Բաղիշոյ, ի Մշոյ, և ի Բերկրոյ, յԱրձիշոյ, ի Վանայ, յԱրծկոյ, յԵզնկոյ, ի Դերջանայ, ի Բաբերդոյ, յԱրգրումայ, ի Սպերոյ, ի Բասենոյ, ի Կաղզումանայ, ի Շիրակումանայ, յԱրաբատեան մասնաւոր գաւառացն յամենեցունց, յԱլաշկերտոյ, ի Մակուայ, ի Խոյայ, ի Սալմաստայ, յՈրմեայ, և այլ ևս իւրաքանչիւր աշխարհաց»⁹: Ահա նման միջավայրում հղկվում ու մշակվում էր Ջուղայի միջբարբառային հայերենը, որ առևտրային ճանապարհով սփռվելով ողջ հայության մեջ՝ զգալի ազդեցություն ունեցավ հետագայի գրական արևելահայերենի մշակման վրա: Ջուղայում, ապա և Նոր Ջուղայում, Թբիլիսիում և անշուշտ Արարատյան դաշտի բնակավայրերում մշակվեց արևելահայերենը, որը գրական նորմավորման հասավ XIX դ. երկրորդ կեսից սկսած: Արևելահայ իրականության գրական կենտրոնն այս ժամանակաշրջանում նախ և առաջ Արարատյան աշխարհն էր և Իրանի հայկական բնակավայրերը: Հիշատակելի են Կոստանդ Վարդապետ «Հաշուեմատեան», Կոստանդ Ջուղայեցի «Աշխարհաժողով», Խաչատուր Ջուղայեցի «Պատմութիւն Պարսից», նաև՝ Սիմեոն Ջուղայեցու, Ոսկան Երևանցու (ծագումով Սպահանից էր) և այլոց աշխատությունները:

Արևմտահայ իրականության լեզվական կենտրոնն էր նախ և առաջ Կ. Պոլիսը: XVII–XVIII դդ. այստեղ արգասավոր էին գրական արտադրության տեսակետից: Այստեղ են ստեղծվել Ազարիա Սասնեցու և Գրիգոր Կեսարացու և շատ այլոց երկերը: Հովհաննես Կոլոտի հանձնարարությամբ Ղուկաս Խարբերդցին իտալերենից և լատիներենից հայերենի է թարգմանել բազմաթիվ երկեր, այդ թվում՝ «Գիրք մտածական աղօթից», «Անալոճիա» և այլն: Արգասավոր թարգմանիչներից է նաև Հակոբ Դպիրը (XVIII դ.), որը լատիներենից ու ֆրանսերենից թարգմանել է «Գիրք խրատական», «Հունական ժամանակագրություն», Նյուտոնի «Փիլիսոփայությունը» և այլ երկեր: Աբրահամ Կոստանդնուպոլսեցին հեղինակել է կենդաբանական առաջին հայերեն երկը՝ «Պատմութիւն անասնոց և գազանաց, չորքոտանեաց, սողնոց և թիւնաւորաց, թռչնոց և մարդկան, ծովային ձկանց...» աշխատությունը: Բազմաթիվ երկեր է հեղինակել Երեմիա Չելեպի Քյումուրձյանը՝ «Օրագրութիւն», «Տարեգրական պատմութիւն», «Պատմութիւն համառօտ Դձ տարւոյ օսմանցոց թագաւորացն», «Պատմութիւն Ստամպոլոյ» և այլն: Հայ աստվածաբանական մտքի բարձր նշաձող հաստատած հեղինակներից է Հակոբ Նալյանն իր մի շարք աշխատություններով՝ «Վէմ հաւատոյ», «Մեկնութիւն Նարեկի», «Գանձարան ծանուցմանց»¹⁰: XVIII դ. Կ. Պոլսի գրական կենտրոնական դեմքն էր Պաղտասար Դպիրը, որի բանաստեղծություններից բացի ուշագրավ են «Գրքուկս շահաւէտ, ունի յինքեան բանս», «Կրթութիւն քրիստոնէական պաշտօնի» աշխատությունները, երկհատոր քերականութիւնը և այլն:

⁹ Առաքել Դարիժեցի, 1990, 352:

¹⁰ Նալյան Հակոբ, 2013:

XVIII դ. երկրորդ քառորդից ասպարեզ իջած Մխիթարյանների երկերում արդեն նկատվում է նորմավորված արևմտահայերենի գործածություն:

Արևմտահայ գրական-լեզվական հայտնի կենտրոններից է նաև լեհահայ միջավայրը: Ամիջական կապ ունենալով արևմտահայ այլ կենտրոնների հետ՝ լեհահայ գաղութում նշված ժամանակաշրջանում գրվել, թարգմանվել, ստեղծվել են բազմաթիվ երկեր: Սիմեոն Լեհացուն (1584–1635) են պատկանում «Տարեգրութիւն»-ը, «Վիպասանութիւն Նիկողական»-ը, իսկ «Ուղեգրութիւնը» այս ժանրի գլուխգործոցն է միջնադարի հայ գրականության մեջ: Լեհահայ միջավայրում ստեղծագործած ներկայացուցիչներից են Տեր-Յակոբ Բաղտասարյանը, որի օրագրությունը «գրված է միջին հայերենով, խառը գրաբարով և որը նվիրված է 1704 թ. Լեհաստան կատարած շվեդացիների ներխուժման նկարագրությանը»¹¹: Լեհահայ բանաստեղծներից են Մինաս Թոխաթեցին, Բարսամուս Բոգդանովիչը (Պարսամ Տրապիզոնցին)՝ իր «Վասն Ալոբայի» ստեղծագործությամբ, Հակոբ և Ղազար Թոխաթեցիները: Հակոբ Թոխաթեցու գրչին են պատկանում «Ողբ ի վերայ Եդուկիա քաղաքին, որ այժմ ասի Թոխաթ», «Գովք Յակոբ Այվաթեցի», «Տաղ վասն կենաց մարդկան», «Յակոբ Թոխաթեցույ ասացեալ տաղ զղջման խոստովանօրէն», «Նորին Յակոբի ողբ աղօթական», «Խրատք ի կարգ շարական քաղելու» ստեղծագործությունները, վերջինս նաև չափածոյի է վերածել Սաղմոսարանի բոլոր 150 գլուխները և Նարեկի մի քանի գլուխներ: Լեհահայ միջավայրում հայերենի են թարգմանվել մի շարք գրվածքներ, այդ թվում՝ «Յոթն իմաստասիրաց պատմութիւն» (1641 թ.), «Ապոթեգմատա» (1633), «Հայելի վարուց» ժողովածուն (1651, թագմանել է Ստ. Լեհացին) և այլն:

Արևմտահայ լեզվական կենտրոնների շարքում պետք է հիշատակել նաև Երուսաղեմը, Հունգարիան, Տրանսիլվանիան և Ղրիմը: Վերջինում բուռն զարգացում ապրեց հատկապես բանաստեղծական արվեստը: Կաֆա, Սուրխաթ, Սուրոժ, Օրբազար (Արմյանսկի բազար) և այլ քաղաքների հայկական միջավայրում հանդես եկան գրողներ և տաղասացներ Վրթանես Կաֆայեցին (XVI դ.), Վարդան Կաֆայեցին (1615–1712), Ստեփանոս Թոխաթեցին (XVII դ.), Մարտիրոս Ղրիմեցին և շատ ուրիշներ: Վարդան Կաֆայեցին կազմել է տոմարագիտական չափածո ձեռնարկ՝ տոմարական բոլոր հաշվարկներով: Հակոբ Ղրիմեցուց հայտնի է «Լուծմունք մարդակազմութեան» բժշկագիտական աշխատությունը: Ուշագրավ են Խաչատուր Կաֆայեցու «Տարեգրութիւնը», Դավիթ Գրիչի ընդարձակ հիշատակարանը, որը դրիմահայերի պատմությունն է ներկայացնում:

Հայերենագիտության մեջ անխախտ սկզբունք է վերը նշված կենտրոնների համար գործածել «արևելահայ» և «արևմտահայ» ընդհանրական անվանումները: Դա անշուշտ պայմանավորված է հետազայում երկձյուղ նոր գրական հայերենի ի հայտ գալու հանգամանքով: Սակայն պետք է ասել, որ մեր մատնանշած լեզվական կենտրոններից յուրաքանչյուրի (Նոր Զուղայի, Վենետիկի, Ղրիմի, նաև՝ Զմյուռնիայի, Վասպուրականի և այլն) ունեցած դերը և բերած նպաստը նոր գրական հայերենի մշակման հարցում դեռևս պարզաբանման կարիք ունեն: Մանավանդ որ այս կամ այն գավառից

¹¹ Բարսեղյան Բ., 1992:

սերող հեղինակի, թարգմանչի, գրիչի, հիշատակագրի լեզվի վրա տվյալ բնակավայրի խոսվածքը բնական ազդեցություն է գործում, որն էլ արտացոլվում է ստեղծված երկերում:

Վաղ աշխարհաբարի բնագրերը հարուստ են ձևաբանական ու բառապաշարային նոր իրողություններով: Մեր կողմից հրատարակության պատրաստվող «Վաղ աշխարհաբարի նորահայտ բառերի բառարան» աշխատության մեջ մենք ամփոփել ենք միայն նորակազմ, իմաստափոխված և նոր փոխառյալ չորս հազարի հասնող բառեր: Այն պարունակում է ա) հեղինակային նորակազմություններ, որոնք հանդիպում են թե՛ գեղարվեստական գրականության մեջ, թե՛ այլ ժանրերի երկերում (գայլասարաս, գետյարուց, եկազան, կերարկ «մատուցող», լուսակառ, խելունակ, խրատապատժել, ծոմարձակ, կարկաչոտություն «դատարկախոսություն», նոյնագոր), բ) հին հայերենի համեմատ հնչյունափոխված (երեգ «երեք», զարգարդար «ծառզարդար», գէթոն «գեյթոն», խոյակապ «հոյակապ»), գ) իմաստափոխված (ծող «դրոշ», երկաթ «նավի խարիսխ», աղմունկ «վեճ»), դ) փոխառյալ բառեր, որոնց մի մասն իր ժամանակին համագործածական է եղել, այնքան, որ շատերը «ներխուժել են» անգամ գրաբար բնագրերի մեջ (բուրկրաթօռ, գաբլիցիա, գրափ, էսկալէ, ըսլուկա, լիման):

Բառաշարքում կարելի է հանդիպել լատիներեն, իտալերեն, լեհերեն, ռուսերեն, գերմաներեն, հունարեն, հունգարերեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, վրացերեն լեզուներից կատարված բազմաթիվ փոխառությունների:

Ժանրային առումով XVII-XVIII դարերում ստեղծված հայերեն երկերը խիստ լայն ընդգրկում ունեն՝ պատմագրություն, ուղեգրություն, գեղարվեստական գրականություն, բանաստեղծություն, իմաստասիրական, աստվածաբանական ու դավանաբանական ստեղծագործություններ, քերականական և բառարանագրական երկեր, հիշատակարաններ ու հիշատակագրություններ, կոնդակներ, նամակներ, վանական գրանցամատյաններ (քյոթուկներ), քաղաքային ու դատական գրագրություններ և այլն: Չկա մի ժանր, որից այս շրջափուլում պահպանված չլինեն մի շարք արժեքավոր երկեր: Պահպանվել է նաև դիվանական հարուստ ժառանգություն՝ կաթողիկոսական, պատրիարքական գրագրություններ (Էջմիածին, Կ. Պոլիս, Նոր Զուղա, Երուսաղեմ, Վենետիկ և այլն), որոնց մի մասն այսօր տպագրված է և որոնք հավասարապես արժեքավոր են հայերենի պատմական ուսումնասիրության համար:

Այս շրջանի երկերը հավասարապես կարևոր են հայագիտության և գիտության պատմության բոլոր ճյուղերի լեզվի ուսումնասիրության համար: Աղբյուրներից հսկայական ու դեռևս չուսումնասիրված նյութեր ու փաստեր կարելի է քաղել անխտիր բոլոր գիտաճյուղերի համար, այդ թվում՝ ուշ միջնադարում ձգգրիտ գիտությունների, աստղագիտության, բժշկագիտության, տոմարագիտության, փիլիսոփայության, երաժշտության և այլնի վերաբերյալ:

* * *

XVII–XVIII դդ. ստեղծված երկերի մի նշանակալի մասը տպագրվել է այլևայլ առիթներով, մի մասը՝ անգամ իր ժամանակին: **Անտիպ են մնում** հատկապես դիվանական բազմաթիվ փաստաթղթեր, այդ թվում՝ Նոր Զուղայի, Երուսաղեմի, Լվովի, Ամստերդամի պետական արխիվներում: Նշված քաղաքներում և այլ վայրերում XVII–XVIII դդ. տնտեսական ու մշակութային ծաղկում են ապրել հայ գաղթավայրերը, ուստի բնական է հարուստ գրավոր ժառանգության առկայությունը: 2000–2002 թթ. Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում աշխատելու տարիներին տողերիս հեղինակը առիթ ունեցել է առնչվելու Պատրիարքարանում պահպանվող մեծաքանակ արխիվային փաստաթղթերի հետ: Դրանց մի չնչին մասը մեր ջանքերով թվայնացվել է, որոնք XVII–XVIII դդ. գրված հրամանագրերը, դատական որոշումները, մուրհակները ամփոփող թղթե ձեռագրեր էին: Դրանց մեջ անթիվ նոր տվյալներ կարելի է գտնել նշված դարերում Երուսաղեմի հայ միաբնության, քաղաքի բազմազգ և բազմակրոն համայնքի, մայրաքաղաք Կ.Պոլսի ու սուլթանների հետ ունեցած առնչությունների, Կ. Պոլսի և Երուսաղեմի հայ հոգևոր կառույցների փոխհարաբերությունների ու շատ այլ հարցերի մասին և վերականգնել պատմական պատկերը:

Առանձին և տարողունակ թեմա է հայ **հնատիպ գրքի** լեզվի քննությունը:¹² 1512 թ-ից մինչև 1700 թթ. տպագրվել են 184 անուն գրքեր, որոնք բովանդակում են վերը թվարկված բոլոր ժանրերը, լեզվական բոլոր շերտերը, այդ թվում՝ երեք աշխարհաբարյան գրքեր («Արիեստ համարողութեան», «Պարզաբանութիւն Սաղմոսացն Դաւթի», «Գանձ չափոյ, կշռոյ, թուոց և դրամից բոլոր աշխարհի»): Սրանց մեջ քիչ չեն նաև լատինաբան հայերենը ներկայացնող երկերն ու թարգմանությունները, որոնցից հիշատակելի է Հովհաննես Պոնայի «Ձեռքածութիւն յերկինս» թարգմանական երկը, որին կցված է Վարդան Հունանյանի՝ ամբողջությամբ լատինաբան հայերենը ներկայացնող բառարանը: Դրանք ժանրային առումով և լեզվական կաղապարով հիմնականում նման են ձեռագիր հիշատակարաններին: Պարունակում են թե՛ վաղ աշխարհաբարը ուսումնասիրելու և թե՛ պատմական ու ազգագրական փաստեր:

* * *

Վերը ասվածը բավարար է պնդելու համար, որ XVII–XVIII դդ. հայ իրականության մեջ մտավոր ու նաև տնտեսական վերազարթոնք են թե՛ բուն Հայաստանում, թե՛ գաղթավայրերում՝ Լեհաստան, Դրին, Նոր Զուղա, Հոլանդիա, Իտալիա: Լեզվական ոլորտներից զատ դրա ապացույցներից է, օրինակ եկեղեցաշինությունը, իսկ ամեն եկեղեցի ու վանք իր հետ բերում էր գրչության ու հոգևոր ուսմունքների կազմակերպում ու զարգացում: Առաքել Դավրիժեցու պատմության մեջ պահպանված հետևյալ մի հատվածը փաստում է եկեղեցաշինության մեծ թափը. «Կան և այլ ևս բազում վանօրայք

12 Տե՛ս Պողոսյան Ն., 2012:

նորոգեալ, և բազում եկեղեցիք ի հիմանց նոր շինեալք՝ ի քաղաքն Տփլիս, և ի գաւառնսն Լոռոյ, և յաշխարհն Արարատու, ի գաւառն Սիսակայ, և յաշխարհն Ղափանայ, ի քաղաքն Նախչուան, և ի գեղօրայս նորա, որպէս չքնաղ և մեծաշուք և վայելուչ եկեղեցին Աստապատու, և քաղաքին Նախչուանու, և Ճահկայ գեղին, և Շահկերտու գեղին և Գաղ գեղին, որք շինեցան յաւուրս տեառն Յակովբայ կաթողիկոսին, և Շոռօթու եկեղեցին, և Ագուլեաց վանքն ի տեղի չորս եկեղեցին, և Թարվիզու քաղաքի եկեղեցին, և Դարաշամբայ եկեղեցին, և Յղնոյ եկեղեցին, սոքա և այլք յոլովք՝ զորս ոչ յիշեմ, ոմանք յաւուրս Մովսէս կաթողիկոսին շինեցան, և ոմանք յաւուրս Փիլիպպոսի կաթողիկոսի»¹³:

Եվ վստահաբար հայ գրավոր մշակույթի այս շրջանը, ինչպես ժամանակին բնութագրվել է Հրաչիկ Միրզոյանի կողմից, պետք է անվանել հայկական «երկրորդ վերածնունդ»:

¹³ Առաքել Դարիժեցի, 1990, 286:

НОРАЙР Б. ПОГОСЯН
*Кандидат филологических наук,
доцент, ЕГУ
nornor@mail.ru*

НЕКОТОРЫЕ ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ АРМЯНСКИХ ПИСЬМЕННЫХ ИСТОЧНИКОВ XVII– XVIII ВВ.

РЕЗЮМЕ

XVII–XVIII вв. знаменуют собой новый этап развития армянского языка и литературы. Литература этого времени продолжает развивать многие традиционные жанры армянской письменности – историографию, тексты религиозного характера, светскую деловую переписку, художественные произведения и т. д. При этом в языковом отношении эти тексты неоднозначны, в них сосуществуют древнармянский язык – грабар, все более активно развивающийся разговорный (светский) язык – ашхарабар и диалектная лексика. Хотя элементы живой речи встречались в текстах и прежде, в исследуемый период смешение грабара и ашхарабара протекает уже очень активно, и это явление определенно отражает процесс формирования нового армянского языка.

NORAYR B. POGHOSYAN
PHD, Yerevan State University
nornor@mail.ru

SOME LINGUISTIC CHARACTERISTICS OF ARMENIAN WRITTEN SOURCES OF THE 17th – 18th CENTURIES

SUMMARY

The 17–18th centuries can be marked as a new phase in the history of Armenian language and writing culture. In this period almost all genres of writing and translating art were developed. Moreover, the works created in this period are characterized by their non monotonicity from the linguistic point of view. Side by side they coexist with old Armenian, new emerging ashkarhabar and works written in dialects. Simultaneously, we have a mixture of 1. Old Armenian, 2. New emerging ashkarhabar, 3. works written in dialects.

Based on some evidence the author tries to represent here three kinds of linguistic features. A number of works are presented that were written in Old Armenian grabar, ashkarhabar or in dialects. In the 17–18th centuries there were a few centres of Armenian writing culture, such as Constantinople, Nor Jugha, Poland, Crimea, etc, where we notice the linguistic influence of those places on works.

In terms of genre Armenian works created in the 17–18th centuries were widely included in historiography, tour, fiction, poems, philosophical and grammatical works, records, letters, monastic registers, municipal and judicial communication, etc. Some of them have been published, but there are still many unpublished works. There is also a number of works that are considered lost. There are various sources of information about them, but the original manuscripts have not yet been found. The discovery and publication of that works has great importance for Armenian Studies.

In this article the author concludes that the period of the 17–18th centuries was the time when Armenian writing culture should be called Armenian “Second Renaissance”.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Առաքել Դարիժեցի**, – Գիրք պատմությանց, Երևան, 1990:
- Բարսեղյան Բ.**, – Լեհահայության մշակութային կյանքը և գրականությունը XIV–XIX դարերում, Երևան, 1992:
- Գալստյան Ս.**, – Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Եր., 1963:
- Իշխանյան Ռ.**, – Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Եր., 1978:
- Իշխանյան Ռ.**, – Նոր գրական հայերենը 17–18-րդ դարերում, Եր., 1979:
- Համբարձումյան Վ.**, – Լատինաբան հայերենի պատմություն, Եր., 2010:
- Մկրտչյան Է.**, – Աշխարհաբար տերմինի մասին, ԲԵՀ, 1979, թ. 3:
- Նալյան Հ.**, – Հոգևոր գրույցներ, Էջմիածին, 2013:
- Շահբազյան Գ. Տ.**, – Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Եր., 1963:
- Ջահուկյան Գ.**, – Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը XVIII–XIX դարերում, 1954 (անտիպ):
- Ջահուկյան Գ.**, – Հայոց լեզվի կազմավորումը և կառուցվածքը, Եր., 1969:
- Պողոսյան Ն.**, – Վաղ աշխարհաբարի իմաստափոխության դասակարգման նոր փորձ, ՊԲՀ, 2012, թ. 2, էջ 227–239:
- Պողոսյան Ն.**, – Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակագրություններ (1512–1712 թթ.), Երևան, 2012:
- Պողոսյան Ն.**, – 16–17-րդ դարերի հայերեն գրավոր աղբյուրների բնութագիրը, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» միջազգային երկրորդ գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2013, էջ 147–149:
- Պաղտասար Դպիր**, – Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիրիմաց, Կ. Պոլիս, 1736:
- Սիմեոն Դպիր**, – Սիմեոն դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն, հրատ. Հ. Ներսէս Ակինեան, Վիեննա, 1936: